ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 22 25.11. 2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ №-10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Հաստատել համայնքի ավագանու հերթական №-10 նիստի օրակարգը

Ավագանու անդամներ

1. _____ կողմ Ջիվան Մանուկյան
(ստորագրություն)

2. _____ կողմ Անուշ Սարգսյան
(ստորագրություն)

3. _____ կողմ Խանում Գևորգյան
(ստորագրություն)

4. _____ կողմ Հրահատ Գրիգորյան
(ստորագրություն)

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 23 -Ն 25.11. 2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 Թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով և «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Հաստատել Զանգակատուն համայնքում 2017 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝համաձայն հավելվածի

Ավագանու անդամներ

/ստորագրություն/ Ա. Մարգսյան

/ստորագրություն/ Ջ.Մանուկյան

/ստորագրություն/ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Հ.Գրիգորյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

10-րդ նիստի No23 որոշման ՀԱՎԵԼՎԱԾ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4 500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9 000 դրամ,

բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 12 000 դրամ,

բգ) 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15 000 դրամ.

բդ) 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 դրամ.

դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

զ) 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 1000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ,

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ,

զ) 501 և ավել քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6000 դրամ,

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է ՝ յուրաքանչյուր օրվա համար 300 դրամ ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ) Զանգակատուն համայնքը Հայաստանի Հանրպետության կառավարության սահմանամերձ բնակավայրերի ցանկում ընդգրկված բնակավայր է, ըստ որի հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50 000 դրամ.

գ) Զանգակատուն համայնքը Հայաստանի Հանրպետության կառավարության սահմանամերձ բնակավայրերի ցանկում ընդգրկված բնակավայր է, ըստ որի խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի սեղմված բնական կամ հեղուկացված նաֆթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության կետերում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 15 000 դրամ

գա) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 3 000 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 5 000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 7 000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 10 000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 15 000 դրամ. հիմնական շինությունների ներսում՝

ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 250 դրամ,

բ) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 500 դրամ.

գ) 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 1000 դրամ.

դ) 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 2 000 դրամ.

ե) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 4 000 դրամ.

զ) 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար 8 000 դրամ

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առևտրի օբյեկտների համար՝ 30 000 դրամ.

բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ.

դ) մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ.

ե) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:

8.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:

8.2. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 5 000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 10 000 դրամ:

10.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 100 000 դրամ:

11. Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով Զանգակատուն համայնքում հաշվարկված է 0.3 գործակցի կիրառմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 24-Ն 25.11.2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի հատկանիշներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀԱՍՏԱՏԵԼ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2017թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ՝
ԸՍՏ ՀԱՎԵԼՎԱԾԻ

Ավագանու անդամներ

/ստորագրություն/	Կողմ	Ա. Մարգսյան
/ստորագրություն/	Կողմ	Ջ.Մանուկյան
/ստորագրություն/	Կողմ	Խ.Գևորգյան
/ստորագրություն/	Կողմ	Հ.Գրիգորյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Է.ՍԱՀԱԿՅԱՆ

10-րդ նիստի No24 որոշման ՀԱՎԵԼՎԱԾ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԵՎ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2015թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Համայնքի ղեկավար		200 000
1.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ		
Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար / 1.2 - 1/	1	120 000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ / 3.1 -1/	1	110 000
Գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ / 3.2-1 /	1	87 000
Գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ / 3.3-1 /	1	85 000
2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ		
Հարկահավաք	1	73 000
Գրադարանավար	1	73 000
Մշակույթի տան տնօրեն	1	73 000
Համայնքի ղեկավարի տեղակալ	1	85 000
3. Տեխսպասարկման անձնակազմ		
Հավաքարար	1	78 000
Վարորդ	1	73 000

10-րդ նիստի No24 որոշման ՀԱՎԵԼՎԱԾ

«ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

2016թ. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ ԴՐԱՄ/
Տնօրեն	1	120 000
Հաշվապահ	1	73 000
Դաստիարակ	1	100 000
Դայակ	1	78 000
Պահակ - այգեպան	1	73 000
Խոհարար	1	78 000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 25-Ն 25.11.2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՔԻ 2017Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

ՀԱՍՏԱՏԵԼ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՔԻ 2017Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ
ԸՍՏ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՆ

Ավագանու անդամներ

/ստորագրություն/ Կողմ Ա. Սարգսյան

/ստորագրություն/ Կողմ Ջ.Մանուկյան

/ստորագրություն/ Կողմ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Կողմ Հ.Գրիգորյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ՍԱՀԱԿՅԱՆ

Վարչական բյուջե

ՀՀ Արարատի մարզի Զանգակատուն համայնքի 2016թ. վարչական բյուջեի եկամուտները հազ.դրամ

h/h	*Եկամտատեսակները*	
	Ընդամենը եկամուտներ, այդ թվում	27,433,6
	1. Հարկեր և տուրքեր,այդ թվում	3800,0
1/1	Գույքային հարկեր անշարժ գույքից,այդ թվում	2300 0
	Գույքահարկ շենքերի և շինությունների,որից	
	Ֆիզիկական անձանցից	
	Իրավաբանական անձանցից	
	Հողի հարկ,այդ թվում	1 500,0
	Ֆիզիկական անձանցից	1 500,0
	Իրավաբանական անձանցից	
1/2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	23 00 0
1/3	Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար, այդ թվում	50.0
	Տեղական տուրքեր,որից՝	50,0
	Շինությունների շինարարության թույլտվության համար,որից	
	Հիմնական շինությունների համար	
	Ոչ հիմնական շինությունների համար	
	Շենքերի և շինությունների վերակառուցման թույլտվություն	
	Շինությունների քանդման թույլտվություն	
	Օխախոտի վաճառքի թույլտվություն	25,0
	Խմիչքների իրացման համար	25,0
	Բացօթյա վաճառքի համար	
	Վառելիքի վաճառքի համար	
	Ժամը 24^{00}-ից հետո աշխատելու համար	
	Արտաքին գովազդի համար	
	Տաքսի ծառայության թույլտվության համար	
1/4	Ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման այլ պարտադիր վճարներ,այդ թվում	
	Պետական տուրքեր,այդ թվում	
	Զագս	
	Նոտար	
1/5	Այլ հարկային եկամուտներ /տույժեր և տուգանքներ/	
	2. Պաշտոնական դրամաշնորհներ,այդ թվում՝	22843,6
2/5	Ընթացիկ ներքին դրամաշնորհներ /դոտացիա/	**22804,0**
	Այլ դոտացիա	39.6
	Սուբվենցիա	
	3. Այլ եկամուտներ,այդ թվում	740.0
3/3	Գույքի վարձակալությունից մուտքեր,որից՝	740,0
	Հողերի վարձակալություն	700,0
	Այլ գույքի վարձակալություն	40.0
3/4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից,այդ թվում՝	
	Պատվիրակված լիազորություններ	
3/5	Վարչական գանձումներ,այդ թվում	
	Տեղական վճարներ	
	Շենքերի օրինականացման վճարներ	
	Ծնողական գումարներ	
3/6	Մուտքեր տույժերից և տուգանքներից,այդ թվում	
	Վարչական իրավախախտումների համար	
	4. Վարչական բյուջեի մնացորդ,որն ուղղվում է նախորդ տարիների պարտքերի մարմանը	

Արարատի մարզի Զանգակատուն համայնքի 2017թ. վարչական բյուջեի ծախսեր հազար դրամ

	01.1.1.	01.6.1	04.5.1.	05.1.1.	08.6.1.	09.1.1.	10.7.1.	10. 9.1	11.1.2	09.2.1	Ընդամենը
	կառավարարար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 26 25.11.2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով,ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զանգակատան գյուղապետարանում և գյուղապետարանին ենթակա կառույցներում 2016թ.գույքագրման հանձնաժողովի կողմից կատարված գույքագրման արդյունքները՝ ըստ հանձնաժողովի կողմից կազմված ակտերի:

Ավագանու անդամներ

/ստորագրություն/ Կողմ Ա. Սարգսյան

/ստորագրություն/ Կողմ Ջ.Մանուկյան

/ստորագրություն/ Կողմ Խ.Գևորգյան

/ստորագրություն/ Կողմ Հ.Գրիգորյան

Դեմ չկա,ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 27 25.11.2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ,ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆ ԽԱՉԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ԶԻՋԵԼՈՒ ՀԱՐՑԸ:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով և Զանգակատուն գյուղի բնակիչ Խաչիկ Գևորգյանի անձնական դիմումով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ է՝

Ընդառաջել Խ.Գևորգյանի խնդրանքին, իրեն պատկանող ավտոմեքենայի գույքահարկի 87000 (ութսունյոթ հազար) դրամի չափով տալ արտոնություն:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. _____ կողմ Ջիվան Մանուկյան
(ստորագրություն)
2. _____ կողմ Անուշ Սարգսյան
(ստորագրություն)
3. _____ կողմ Խանում Գևորգյան
(ստորագրություն)
4. _____ կողմ Հրահատ Գրիգորյան
(ստորագրություն)

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

№ 28 25.11.2016թ.

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՏՆՏԵՍԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածով, ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տնտեսած միջոցների հաշվին Զանգակատան գյուղապետարանի աշխատակիցներին՝ համայնքի ղեկավային՝ 105000 (մեկ հարյուր հինգ հազար) դրամ, համայնքի ղեկավարի տեղակալին՝ 95000 (իննսունհինգ հազար) դրամ, գյուղապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ 85000 (ութսունհինգ հազար) դրամ, գյուղապետարանի աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետին՝ 85000 (ութսունհինգ հազար) դրամ և հարկահավքին՝ 73000 (յոթանասուներեք հազար) դրամ չափով տրամադրել հավելավճարներ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

1. _____ կողմ Ջիվան Մանուկյան
(ստորագրություն)

2. _____ կողմ Անուշ Սարգսյան
(ստորագրություն)

3. _____ կողմ Խանում Գևորգյան
(ստորագրություն)

4. _____ կողմ Հրահատ Գրիգորյան
(ստորագրություն)

Դեմ չկա, ձեռնպահ չկա

Կ.Տ. ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Է.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)